## *1.4.2. Բնակչության դրամական եկամուտները և ծախսերը, աշխատավարձ և այլ եկամուտներ*

### *Բնակչության դրամական եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը*

Բնակչության դրամական եկամուտները 2012թ. հունվար-հունիսին կազմել են 55037.2 մլն դրամ և նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել են 15.6 տոկոսով: Դրամական ծախսերը նույն ժամանակաշրջանում կազմել են 54918.0 մլն դրամ և ավելացել են 12.1 տոկոսով:

*Բնակչության դրամական եկամուտները և ծախսերը*

*/մլն դրամ /*

| | 2011թ. հունվար-հունիս | 2012թ. հունվար-հունիս | Բացարձակ աճը, (նվազումը «-» նշանով) | 2012թ. հունվար-հունիսը տոկոսներով 2011թ.հունվար-հունիսի նկատմամբ |
|---|---|---|---|---|
| Բնակչության դրամական եկամուտները | 47617.0 | 55037.2 | 7420.2 | 115.6 |
| Բնակչության դրամական ծախսերը | 48988.3 | 54918.0 | 5929.7 | 112.1 |
| Եկամուտների գերազանցումը ծախսերի նկատմամբ | -1371.3 | 119.2 | 1490.5 | - |

*Բնակչության դրամական եկամուտներն ըստ աղբյուրների*

*/տոկոսներով /*

| | 2011թ. հունվար-հունիս | 2012թ. հունվար-հունիս |
|---|---|---|
| **Ընդամենը եկամուտներ** | **100.0** | **100.0** |
| *այդ թվում՝* | | |
| Աշխատանքի վարձատրություն | 60.6 | 56.3 |
| Սոցիալական և այլ տրանսֆերտներ | 18.6 | 20.0 |
| Եկամուտներ գյուղմթերքների իրացումից | 7.2 | 8.2 |
| Եկամուտներ ձեռնարկատիրական գործունեությունից | 8.0 | 8.4 |
| Այլ եկամուտներ | 5.6 | 7.1 |

Բնակչության դրամական եկամուտների կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ամենաբարձր տեսակարար կշիռն ունի աշխատանքի վարձատրությունը՝ 2012թ. հունվար-հունիսին՝ 56.3 տոկոս, 2011թ. հունվար-հունիսին՝ 60.6 տոկոս:

Բնակչության դրամական եկամուտների ընդհանուր ծավալից 2012թ. հունվար-հունիսին ապրանքների գնման և ծառայությունների վճարման համար բնակչությունը ծախսել է 47783.8 մլն դրամ (86.8 տոկոս), պարտադիր վճարումների և կամավոր մուծումների վճարման համար՝ 3709.8 մլն դրամ (6.7 տոկոս):

*Բնակչության դրամական եկամուտների օգտագործման կառուցվածքը*

*/տոկոսներով /*

| | 2011թ. հունվար-հունիս | 2012թ. հունվար-հունիս |
|---|---|---|
| **Ընդամենը եկամուտներ** | **100.0** | **100.0** |
| *դրանցից օգտագործվել են՝* | | |
| Ապրանքների գնման | 76.0 | 72.8 |
| Ծառայությունների վճարման համար | 19.7 | 14.0 |
| Պարտադիր վճարների և զանազան այլ մուծումների համար | 6.7 | 6.7 |
| Ավանդների և արժեթղթերի ձևով խնայողությունների հավելաճ | 3.8 | 6.9 |
| Վարկերի դիմաց պարտավորությունների փոփոխություն | -6.7 | -2.6 |
| Այլ ծախսեր | 3.4 | 2.0 |
| Կանխիկ դրամի աճ (+) կամ նվազում (-) բնակչության ձեռքին | -2.9 | 0.2 |

*Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտներ:* Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները (եկամուտները՝ հանած պարտադիր վճարումները, հաշվի առած ապրանքների և ծառայությունների սպառողական գների ինդեքսների փոփոխությունները) 2012թ. հունվար-հունիսին կազմել են 50618.7մլն դրամ, ինչը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է 14.0 տոկոսով:

## *Աշխատանքի վարձատրություն**

2012թ. հունվար-հունիսին, համաձայն վիճակագրական տեղեկություններ տրամադրողների կողմից ստացված տվյալների, տնտեսությունում զբաղվածների միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 100429 դրամ և նախորդ տարվա հունվար-հունիսի համեմատությամբ ավելացել է 3.2 տոկոսով: Ընդ որում՝ բյուջետային ֆինանսավորում ունեցող հիմնարկներում և կազմակերպություններում զբաղվածների միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 110818 դրամ և աճել է 3.1 տոկոսով, իսկ առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններում զբաղվածներինը ՝ 92690 դրամ և աճել է 3.3 տոկոսով:

Միջին ամսական անվանական աշխատավարձի տատանումն ըստ տնտեսության ճյուղերի և փոփոխությունը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ բնութագրվում է ստորև բերված տվյալներով.

*Միջին ամսական անվանական աշխատավարձը 2011-2012թթ. հունվար-հունիսին*

*/դրամ/*

| | Միջին ամսական անվանական աշխատավարձ | | այդ թվում՝ | | | 2012թ. հունվար-հունիսը տոկոսներով 2011թ. հունվար-հունիսի նկատմամբ | 2012թ. հունվար-հունիսի ճյուղերի միջին ամսական անվանական աշխատավարձը տոկոսներով՝ միջին հանրապետականի նկատմամբ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 2011թ. հունվար-հունիս | 2012թ. հունվար-հունիս | բյուջետային ֆինանսավորում ունեցող հիմնարկներում և կազմակերպություններում | առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններում, որից՝ պետական հատված | ոչ պետական հատված | | |
| ***Ընդամենը*** | ***97303*** | ***100429*** | ***110818*** | ***81486*** | ***97136*** | ***103.2*** | ***100.0*** |
| Արդյունաբերություն | 98566 | 100016 | - | 84442 | 108100 | 101.5 | 99.6 |
| Գյուղատնտեսություն և անտառտնտեսություն | 66347 | 78697 | 61818 | 92759 | 79197 | 118.6 | 78.4 |
| Շինարարություն | 133174 | 129145 | | 127470 | 129266 | 97.0 | 128.6 |
| Տրանսպորտ | 100 505 | 104377 | 113669 | 85118 | 107297 | 103.9 | 103.9 |
| Կապ | 118 942 | 122811 | - | 60006 | 150676 | 103.3 | 122.3 |
| Առևտուր | 63017 | 63032 | - | 78686 | 62994 | 100.0 | 62.8 |
| Այլ ճյուղեր | 79856 | 78215 | 61270 | 87452 | 56604 | 97.9 | 77.9 |
| Բնակկոմտնտ. և կենցաղսպասարկում | 66 844 | 70402 | 64223 | 63826 | 81926 | 105.3 | 70.1 |
| Առողջապահություն | 68 657 | 76284 | 64182 | 83712 | 43581 | 111.1 | 76.0 |
| Սոցիալական ապահովություն և ապահովագրություն | 63 471 | 62119 | 63740 | - | 76830 | 97.9 | 61.9 |
| Ֆիզկուլտուրա և սպորտ | 47 618 | 47339 | 47512 | - | 41621 | 99.4 | 47.1 |
| Կրթություն | 72 081 | 76991 | 76990 | 79625 | 48611 | 106.8 | 76.7 |
| Մշակույթ և արվեստ | 53150 | 60928 | 52659 | 73577 | 34722 | 114.6 | 60.7 |
| Գիտություն և գիտական սպասարկում | 48 038 | 55045 | 55022 | 55068 | 68150 | 114.6 | 54.8 |
| Ֆինանսներ և վարկ | 176 409 | 188982 | - | - | 61201 | 107.1 | 188.2 |
| Կառավարում և պաշտպանություն | 153 815 | 153783 | 154321 | 65249 | - | 100.0 | 153.1 |
| Հասարակական կազմակերպություններ | 86985 | 85036 | - | - | 188982 | 97.8 | 84.7 |

Ճյուղային կտրվածքով միջին ամսական անվանական աշխատավարձն զգալիորեն բարձր է եղել, հատկապես, վարկավորման, կառավարման համակարգերում, շինարարական կազմակերպություններում, որոնք միջին հանրապետական աշխատավարձի համեմատ կազմել են համապատասխանաբար՝ 188.2, 153.1 և 128.6 տոկոս:

2012թ. հունվար-հունիսին սոցիալական ոլորտի ճյուղերում միջին ամսական անվանական աշխատավարձը հանրապետական միջինի նկատմամբ տատանվել է 47.1 տոկոսից (ֆիզկուլտուրա և սպորտ) մինչև 76.7 տոկոսի (կրթություն) սահմաններում:

* *«Աշխատանքի վարձատրություն» բաժնի տվյալները բերված են համաձայն տնտեսավարող սուբյեկտներից ստացված հաշվետվությունների, որտեղ, սակայն, որոշ ճյուղերում նշված աշխատավարձի ծավալները չեն համապատասխանում իրականությանը: Նշված թերությունները հաշվի են առնված բնակչության դրամական եկամուտների հաշվարկներում, որտեղ հաշվետվային տվյալներից զերծ կիրառվել է նաև լրահաշվարկ:*

*Միջին ամսական անվանական աշխատավարձն*
*ըստ շրջանների և տնտեսության ոլորտների, 2012թ. հունվար-հունիսին*

| | Միջին ամսական անվանական աշխատավարձը, դրամ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | **Ընդամե նը ԼՂՀ** | Գյուղատնտե-սություն և անտառային տնտեսություն | Արդյունաբե-րություն | Շինարա-րություն | Տրանսպորտ և կապ | Պետական կառավա-րում | Այլ |
| **Ընդամենը ԼՂՀ** | **100429** | **78697** | **100016** | **129145** | **115560** | **153783** | **75144** |
| ք.Ստեփանակերտ | 116537 | 75915 | 81357 | 137718 | 137483 | 173654 | 82636 |
| Ասկերան | 78530 | 72131 | 74522 | 105862 | 71248 | 82933 | 75321 |
| Հադրութ | 73365 | 77467 | 77101 | 114572 | 81973 | 72779 | 66405 |
| Մարտակերտ | 96959 | 87113 | 171518 | 99696 | 68249 | 69308 | 65998 |
| Մարտունի | 71020 | 84689 | 73708 | 99015 | 79573 | 81330 | 64153 |
| Շահումյան | 69127 | 60938 | 77855 | - | - | 67965 | 69938 |
| Շուշի | 74430 | 73316 | 76174 | 88120 | 89952 | 114699 | 58300 |
| Քաշաթաղ | 74724 | 75753 | 79279 | 82505 | 81724 | 74538 | 73155 |
| | **Ընդամենի նկատմամբ, %** | | | | | | |
| Ընդամենը ԼՂՀ | **100.0** | 78.4 | 99.6 | 128.6 | 115.1 | 153.1 | 74.8 |
| ք.Ստեփանակերտ | **100.0** | 65.1 | 69.8 | 118.2 | 118.0 | 149.0 | 70.9 |
| Ասկերան | **100.0** | 91.9 | 94.9 | 134.8 | 90.7 | 105.6 | 95.9 |
| Հադրութ | **100.0** | 105.6 | 105.1 | 156.2 | 111.7 | 99.2 | 90.5 |
| Մարտակերտ | **100.0** | 89.8 | 176.9 | 102.8 | 70.4 | 71.5 | 68.1 |
| Մարտունի | **100.0** | 119.2 | 103.8 | 139.4 | 112.0 | 114.5 | 90.3 |
| Շահումյան | **100.0** | 88.2 | 112.6 | - | - | 98.3 | 101.2 |
| Շուշի | **100.0** | 98.5 | 102.3 | 118.4 | 120.9 | 154.1 | 78.3 |
| Քաշաթաղ | **100.0** | 101.4 | 106.1 | 110.4 | 109.4 | 99.8 | 97.9 |

*Միջին ամսական անվանական և իրական աշխատավարձերը,*
*2011-2012թթ. հունվար-հունիսին*

| | 2011թ. հունվար-հունիս | 2012թ. հունվար-հունիս |
|---|---|---|
| Միջին ամսական անվանական աշխատավարձ, *դրամ* | ***97303*** | ***100429*** |
| Իրական աշխատավարձը սպառողական գների ինդեքսով, *դրամ* | 88861 | 99042 |

*Սահմանված նվազագույն աշխատավարձի, միջին ամսական անվանական աշխատավարձի և նվազագույն սպառողական բյուջեի հարաբերակցությունը, 2012թ. հունվար-հունիսին*

| | Նվազագույն աշխատավարձի հարաբերակցությունը, % | | Միջին ամսական անվանական աշխատավարձի հարաբերակցությունը նվազագույն սպառողական բյուջեի նկատմամբ, % |
|---|---|---|---|
| | միջին ամսական անվանական աշխատավարձի նկատմամբ | նվազագույն սպառողական բյուջեի նկատմամբ* | |
| 2012թ. հունվար-հունիս | 32.4 | 62.7 | 193.8 |

* Հաշվարկված ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակված սննդամթերքի կազմով, կառուցվածքով և էներգետիկայով՝ համապատասխան կիսամյակի միջին ընթացիկ գներով: